

Հարց

Հանձնաժողովն ի՞նչ տվյալեր կարող է կիրառել լիցենզավորված գործունեություն իրականացնող անձանց նկատմամբ:

Պատասխան

«Էներգետիկայի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի դրույթները, Հանձնաժողովի իրավական ակտերի պահանջները և Լիցենզիայի պայմանները չկատարելու, ոչ պատշաճ կատարելու կամ խախտելու դեպքերում, ղեկավարվելով «Էներգետիկայի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքով՝ Հանձնաժողովն իրավասու է տալու խախտումները վերացնելու վերաբերյալ հանձնարարականներ և կարող է կիրառել հետևյալ տույժերը.

1) նախազգուշացում,

2) «Էներգետիկայի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքով սահմանված տուգանքներ,

3) Լիցենզիայի գործողության կասեցում,

4) Լիցենզիայի գործողության դադարեցում: